ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1156-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով և հաշվի առնելով, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անհամապատասխանություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել և հաստատել «ՈՒՐՍԱ ՄԱԺՈՐ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, ք. Ճամբարակ, Գարդմանի փողոց, 7 հասցեում գտնվող անշարժ գույքի հատկացված հողամասի տեղադիրքը, երկրաչափական և գծային չափերը, ինչպես նաև հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները.

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. Էլեկտրոնային քարտեզում կատարել ուղղում և հաստատել Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Գարդմանի փողոց, 7 հասցեում գտնվող «ՈՒՐՍԱ ՄԱԺՈՐ» ՍՊԸ-ին պատկանող անշարժ գույքի գծային չափերն ու երկրաչափական պատկերը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ «ՈՒՐՍԱ ՄԱԺՈՐ» ՍՊԸ-ին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ռ. ՕՀԱՆՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 11
ք. Ճամբարակ